

ուղին զերը անցաւ Մամիկոնեանց, որոնց սիրելագոյն ներկայացուցիչը վարդաճ պարթեւական վարդաճեան անունը կը կրէ (որ մեր մէջ երկու ձեւի ճիւղաւորուած է վարդաճ և վարդաճ, որ ազգակից են իւրարու այնչափ, որչափ Մամիկոնեանք՝ և լուսաւորչայ տոհմը)։ Ս. Սահակայ մահուանէն, կամ աւելի ճիշդ, Արտաշէս Զ-ի գահընկէցութենէն վերջ՝ Մամիկոնեանք յայտնապէս սկսան արշակունի ճանչցուիլ, և անշուշտ մէկ խնամութիւնը չէր միայն ատոր պատճառ։

Եթէ մեր նկատած հաւանականութիւնը չեն պատրիք զմեզ, Հայ աւանդութեան մէջ սքողուած է ամենէն վեհ ողբերգութիւններէն մին։

Այլ եւս բաղդասինդիր մը չէ որ աշխարհներ կը կտրէ Հայոց թագաւոր մը սպաննելու համար։ Այլ Ասիոյ վրայ միահեծան իշխող թագաւորներու եղբայրներ, որդիքներ որոնք ապաստան կը գտնեն իրենց կրտսերագոյն եղբոր մօտ։ Տանջանք մ'է իրենց համար իրենց հպատակ իշխանին տակ ապրիլ. տանջանք մ'է միանգամայն՝ իրենց բարեբարք և հիւրընկալին դէմ դաւանանելու մտածութիւնը։ Գոռուցութիւնը կը յաղթէ երախտագիտութեան։ Հայոց թագաւորը կը սպաննեն։ Վայրկեան մը գահու վրայ կը բարձրանան Պարսիկ կուսակցութեան շնորհիւ, կը յաղթահարուին Հոռոմեական բանակին մերձեանքով ժամանակ։ Քրիստոնէութիւնը յարաբերութիւններ կը փոխէ. արշակունեաց առաջին և երկրորդ ճիւղերը կը հարտուին. թագաւորութիւնը կը մնայ հայ արշակունեաց, եկեղեցին և բանակը պարթեւ արշակունեաց. նախկին ատելութիւնը և աւանդական մրցութիւնները կը վերսկսին, երբ քրիստոնէական նախկին ոգեւորութիւնը կը շիջանի։ Պարթեւ Արշակունեաց երկու ճիւղաւորութիւնը, եկեղեցականներն և սպարապետները, միշտ իւրարու դաշնակից կը մնան, յաջող ինքնապաշտպանութիւն մը գործածելով արքունեաց դէմ։

Հ. Կ. Տ. ՍԱՆՍՅԱՆ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՈՒՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Նախըթթ. տես էջ 811)

79. էջ 94. տող 37. Զի փիլիսոփայական արուեստին խնայք արկաներ ... — Ուղղ. հարկաներ. ուսմիլ. բերնին գալ, բերնին զարնել։

80. էջ 94. տող 39. Եւ զհաւատս ... հաստատեք.. կարելի է ասել «հաւատեք»։

81. էջ 96. տող 4. Ապա ի մի վայր եղեալ՝ ... զի մի՞ զնա բռնադատ ... — Ուղղ. թերեւս նմա։ Աւելորդ իմն թուի « զնա » և ուղիղ գայ իմաստն « զի մի՞ բռնադատ », և այլն ... Սակայն ինձ թուի որ մի բան պակասում է բոլոր իմաստը լրացնելու համար։

82. էջ 96. տող 16. Ապա իբրեւ սահմանեցաւ ... ուստի՞ կարծիցես բանիցն ... — Ուղղ. կարծիցեն։ Եւսերբոս հրաւերն ընդունելէն զկնի, իւր բոլոր կղերի հետ կ'ընկղմի հոգսի և մտածութեան մէջ թէ ինչ պատասխան կրնան պատրաստել հակառակորդի դէմ։

83. էջ 96. տող 20. Ապա հաստատեցաւ այս բան ... Զի նա, ասէ, կարող է բանիւ զօրութեան. նա մեծ է, ասեն, ի նմա շնորհք խափանել զննեզութիւն... — Այս պարբերութիւնը ինձ խառնակ թուի, և պակասաւոր. «նա» աւելորդ կրկնուած է. այնուհանդերձ փորձելով կարգի բերել, ես այսպէս կը դասաւորէի. « Զի մեծ է, ասեն, ի նմա շնորհքն, նա կարող է բանիւ զօրութեան խափանել զննեզութիւն ... »։

84. էջ 97. տող 7. ... ապականէին զայգին և բրէին։ Պատասխանէին ... — Ուղղել այս վերջակէտը ջնջելով, որ կ'անջատէ մէկ իմաստ երկուքի։ Խոզերը

ոչ թէ առանձին զայգին բրէին և առանձին պատառէին որթոյ տունկերը , այլ մի և նոյն գործողութեամբ բրելով գետինը՝ կը պատառէին որթի համար շինուած տաշտերը :

85. Էջ 98. տող 8. Ապա հոգևով Սըրբով ... և սա գրեք վկայութիւնս ի գրոց ... — Ուղղ. ղեկը վկայութիւնս : Ս. Գրքէն օրինակներ և վկայութիւններ կը բերէր. տես էջ 100. տող 39. « որ կառող իցէ զնեւ զբով բանս ... (նաեւ ի գործս Առաք. « բազմօք զնէր վկայութիւնս » ...) :

86. Էջ 98. տող 31. Եւ ետ հրաման՝ զի գիւտերիտս արկանել ի բանտ ... « զի » ն աւելորդ է Եւտերիտսի. « զ » նախդիրը սխալմամբ « Ե » յի հետ « զի » շարկապն է ձևացրել :

87. Էջ 99. տող 35. ... մի՛ գացի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք ... — Ուղղ. Եշանակ տես էջ 100. տող 13. « որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ » : ...

88. Էջ 103. տող 12. Զի թէպէտ ... ահաւասիկ երաշխատոր իմ ... — Ուղղ. երաշխաւորութեամբ իմ :

89. Էջ 104. տող 39. Տայր հրաման վասակայ, զգունդս վանդակել ... — Ուղղ. Բովանդակել. որ է զօրածողով լինել ի միասին գումարել, կոտի կազմել. տես էջ 186 :

90. Էջ 105. տող 30. Այլ իբրեւ ի միտս աջողակս երբեր ... զբարեխնամութիւնս ցուցանէ : — Ինձ թուի որ ստորակէտը երկու « իսկ » ն զկնի զնելու է :

91. Էջ 107. տող 17. Վասն այնուցիկ ... և ասէին ի հասանել բանիցն ... — Ուղղ. հասանել, ժողովրդեան բողոքին ըսող չկար, ուստի խօսքերնին պարպելով ամէն մէկի վերջի բառն էր թէ « Իրաւունք մեռան » ...

92. Էջ 108. տող 2. Եւ բազում նժոյգս

... օձատովք ... ապրդմովն ... այս բառեր ինձ փոքր մի անհասկանալի են . օձատն կը նշանակէ անշուշտ թրքերէն կամ քրդերէն խաձարի , իբր ձու « շուրջառ » ! նոյնպէս և « ապրդմովն » որ անշուշտ լինելու է « բամբով » . վասն զի թագաւոր անշուշտ դատարկ և մերկ նժոյգներ չի պիտի ուղարկէր, այլ իւր բոլոր կազմածովն , և զխաւոր զարդ և հանդերձանք ձոյն են սանձը , թամբը և « խաճարին » որ հայերէն լինելու է « վարաւանդ » բառը , հոմանիշ « աշխարաւանդ » բառին , իբր կապ և հանգոյց պատուի և իշխանութեան կամ իբրեւ զարդ արքունական . որով « ոսկեվարաւանդ » ծառայելով իբրեւ ծածկոց « բամբիկ » կը նոյնանայ ընդ ապրդմովին և ոչ թէ ապրէշումն մի ինչ որ գործուած բան : (Տես էջ 267. սանձաւ և թամբաւ առ ու գնաց) :

93. Էջ 108. տող 26. Բայց ի ժամանակեանս միող ... Իսկ ի միտս աւուր ... — Ուղղ. ի միտս աւուր : Առաջի օրը ոչ իսկապէս կուրացած՝ այլ հրաշքի զօրութեամբ կալ և կապ եղած բերբեր են վանքի դուռը :

94. Էջ 109. տող 31. Եւ ետ զմինն Ասրիոյ ումեմն կին ... — Սա է Ապոստոլիկս ըստ Խորենացւոյն , էջ 467 : Բայց ինչ ունով համառօտում է Բուզանդ : Այժմ կայ նաեւ ռամկաց մէջ նոյն կրճատման ձևերը Համօ (Համազասպ) Ասօ (Աստուածատուր) : Այսպէս համառօտուած և աղանաղուած թուի և Սահառունեաց տոհմի իշխանի աւունը որ եղբի է « Չմբոյ » էջ 29 և « Չոմն » (Չմօ քրդի անուն) էջ 38. որ կարէ յիշեցնել հեռուէն՝ Չայրմար կամ Չարմայր : Միտ զնելով Մագիստրոսի մեկնարանութեան , զեռ կարիլի է երկուսի բաժանել Չար—Մար . թողում ասորենազէտներուն վերջին վճիռը տալու :

95. Էջ 109. տող 33. Եւ անէին բազում ուրախութիւն ... հոգեւոր զանձին հայրապետին՝ որ առաջ նոցա ... և զորութիւն արտատորեան անձանց ... —

Ուղղելի են հոգեւոր դարձի հայրապետին՝ որ տուաւ նոցա ... և զըբբութիւն սրտաւորեան անձանց ... — Ս. Ներսեսի համար ամենայն Հայոց այսինքն կղկաթ կաթողի էր և պահօք՝ և աղօթքով և ուխտ զնեւ լով կ'աղերսէին շուտով վերադարձին. և ահա որչոր ժողովուրդն «բազում հոգեւորս մեծաւ ցնծութեամբ» տուն կը կատարեն «վասն դարձի» հայրապետին: Գոհ է ժողովուրդն որ իւր ուխտն և խնդրուածքը կատարուեցաւ, որք մնացեր էր, լցուեր էր տրտմութեամբ սրտերնին, սրտաուշ մնացեր էին բայց Աստուած միւս անգամ իրենց «սրտաութիւն անձանց ... հոգեւոր հարբն միախարեաց» ...

96. էջ 110. տող 3. Իսկ թագաւոր Արշակ .. ի կողմանս Բաքասերոյն .. — Արշակ թագաւոր ընդ առաջ կը գնայ Ս. Ներսեսի մինչեւ «ի կողմանս Բաքասերոյն». դա ի՞նչ անուն է և ո՞ր տեղ պէտք է որոշել: Առաջին. Թուրի անունն աղաւաղումն երկու յայտնի գաւառաց Բագրեւանդայ և Բասենոյ, երկրորդ Բագրեւանդայ և Սիւսենի. Բագրեւանդ է այն յայտնի գաւառն որ լի է պատմական յիշատակներով ուրախ և տրտում էջեր ունի տարեգրութեանց մէջ, սահմանակից ընդ Բասենոյ ուր ոչ պակաս երեւելի անցքեր անցեր են. և որ զլիսաւորն է, այդ երկու գաւառներէն կ'անցնէր կեսարեայէն բերող ճանապարհն՝ որ կարելի է արքունի կոչել, և անցնելով Երազկոտն գաւառէն Գարունից բերդի տակէն կ'իջնէր ի Հեր և Զարուանդ և կ'երթար Թաւրէշ ճաղար ...: Ուրեմն Ս. Ներսեսը գալով ի Բասան, Հոն կը փութայ Արշակ որ թերեւս այն կողմերը կամ ի Բասանն էր յամարային ժամանակս: Հետեւապէս աղճատեալ բառ է Բակասերոյն, բեկորներ են Բագաւանի և Բասենի կամ Բագաւանի և Սիւսենի: Թերեւս բունագրօսեալ Թուրի յարմարագրութիւնս, սակայն տես էջ 117 ուր յիշատակութիւն լինի և Բագաւանին և Սիւսենացն? կամ էջ 119 Սիւսեն: Շատ կարելի է որ նախնական քնագիրն եղած է ... Արշակ «եր-

թայր ընդ առաջ նորա մինչեւ ի կողմանս Բասենոյ և անտի մեծաւ զուարթութեամբ դարձան ի Բագաւան»: Որովհետեւ քնազրի մէջ թէ և ասում է դարձան, բայց ո՞ւր, չկայ. եթէ այսպէս ընդունելի լինի ընթերցուածս, կը հետեւի որ Բաքասերոյն յիշեալ երկու անունաց վիժումն է:

97. էջ 110. տող 32. Արդ դու տակաւին ... պարծանօք յայտնապէս պատմի ... — Ուղղ. պատմի: Պատուել զախտս» սովորական դարձուած է առ դասական գրիչս. այստեղ ընդօրինակողն հանդիպելով «պարծանօք» հետեցուցեր է որ պէտք է յայտնապէս պատմել. մինչ եթէ իմաստն հասկանար, և զխտեար որ Արշակ արձակ համարձակ անօրէնութիւն կը գործէր և չէր քաշուեր այլ կը պարծենար, կը գրէր «պատուել»: Տես էջ 244. տ. 27, և էջ 247. տ. 1:

Շարունակելի  
 Հ. Գ. ՆԱԼԱԳՅՏԻՆՍ



**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ \***

(Ի ՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ-ՊԱՍՏՄԱԿԱՆ)

Ա. Հայ Կաթողիկոսը իշխանութիւն չէ ունեցած ըլլող շայտ վրայ. Որո՞ք ազատ էին ամոր հպատակել:

Զարմանք մը պիտի պատճառէ անշուշտ ըսելը որ կաթողիկոսը բոլոր Հայոց վրայ իշխանութիւն չունէր. այսինքն, այն հայերը որոնք ուղղափառ կենսաբոյ մետրապոլիտին իշխանութեան ներքեւ էին և կամ Աղթամարայ և Սոյո կաթողիկոսաց հպա-

\* Այս խորագրով ամբողջական գործ մը պատրաստած ըլլալով՝ Բագաւանի վրէժն սկսած էինք կրտսերակէ ստալին երեք զուխները. Ա. Կաթողիկոս քան զործածութիւնը. (Ռգմ. 1902. թ. 12), Բ. Կաթողիկոսի ընտրութիւնը (անդ). Գ. Զեւարթուցութիւն Հայ կաթողիկոսին (Ռգմ. 1908. թ. 4): Մի քանի միջանկեալ ինքզինքը զանց ընելով կրտսերակէ Հանդիսն մէջ (այն է «Սոսուն» և «աստիճան» քը Կոյ կաթողիկոսին), Զարթոյր զիւրջ երկրորդ յօդուածէն կը սկսինք շարունակել: